

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԷՆ  
Ե. ԹՈՐՈՍՅԱՆ

Նամակ կամ որ եւ է  
զբողոքի նպատակով ուղղել  
Տնօրին. ԱՐՇԱՆՈՅՍ Իրագրի  
ԳԱԶԻՐԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN  
Direc.-propté du journal arménien  
ARCHALOUYCE  
LE CAIRE (EGYPTE)

# ԱՐՇԱՆՈՅՍ

## Լ Ր Ա Գ Ի Ր

### ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԿԻՊՏՈՍԻ ՇԱՄՍԻ	
Տարեկան ողջ դասկին.	60
Վեցամսեայ »	35
ՕՏԱՐ ԵՐԿՐՈՐԵՐ	
Տարեկան Ֆրանկ	20
Վեցամսեայ »	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆՆԻԿ  
Եւ թղթատարի ծախքը  
Խմբագրութեան վրայ է

Խմբագրութեան ուղղուած  
գրութիւնք եւ չ'են տրուիր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ  
Կարեւոր վճարելի են

#### ԽՐԱԿՐԱԿԱՆ ԱԶԳ

ԱՐՇԱՆՈՅՍԻ Պատ. բաժն. անդամներէն ջերմասպես կր խնդրուի որ բարեհաճին նախորդ տարիէն մնացեալ պարտոց կցելով դրկել նաեւ իրենց ԵՐԿՐՈՐԻ Ծառերը թանկանոցիւր, եւ նաեւ չր քողով մասնաւոր դիմումներու, որով ընդ որ դիմումներուն մը պիտի ըլլան ԱՐՇԱՆՈՅՍԻ արդէն բազմազարդ Տնօրինութեան.

#### ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ

(Շարն. նախորդ թիւէն)

×××

Մեր վրայ միշտ հզոր ազդեցութիւն կ'ունենան, և երկիւղած յարգանք ու պատկառանք կը ներշնչեն մեզ ամեն անոնք որոնք ցոյց կուտան կորովի նկարագիր, այսինքն հոգւոյ այն գերագոյն ուժը որը մարմնական ուժէն անհամեմատ կերպիւր Բարձր ու Գերազանց է...

Կամ ի ուժը կորովի նկարագրին մէկ գլխաւոր յատկանիւն է, որը իր բացարձակ ազդեցութեան տակ կ'առնէ, կը կաշկանդէ զքեզ տեսակ մը կապանքներու մէջ զորս չես կրնար և չես ալ ուզեր խզել. մէկ խօսքով անզգալար կը հպատակեցնէ զքեզ իրեն: Հպատակութիւն մը՝ զոր ըստիպման, չարչարանքի կամ զինու զօրութեամբ չէ որ կ'ընդունին... անգիտակից զգացում մը. մղում մըն է դա աւելի ճիշդը դէպի անոր՝ որը սոսկ իր կամքի ուժով կ'իշխէ քու վրայ...

Հոգւոյ և սրտի քաղցրութիւն. դա՛ ալ կորովի նկարագրին մէկ ուրիշ նշանաւոր կողմն է, որը կը դիմէ զքեզ, և կը վերացնէ... Կուզես ծունկի վրայ պաշտել այն մարդը՝ որոյ դիւցազնական մէկ գործը՝ քու հոգւոյդ ու սրտիդ ամենէն նուերական շարքը թրթռացուցած է...

Արժանապատուութեան զգացում. երբէ՛ք իր բարոյական ցաւերը, կրած զրկանքները չյայտնել մէկուն, այլ տանիլ զայնս առանձին, քաջաբար, վեհաբար, միշտ հանդարտ, և եթէ կարելի է միշտ զուարթ, խիստ գեղեցիկ յատկութիւն մըն է որը խորունկ սքանչացում մը կը ներշնչէ մեզ: Սակայն ինչ որ ամենէն քաղցր ու զերագոյնն է, որը ո՛չ միայն քու հոգւոյդ ու սրտիդ կը խօսի, այլ

համակ էութիւնդ կը յափշտակէ. անձնուէր և ինքնամոռաց նկարագրներն են...

Շատ չեմ հանդիպիր դժբաղդաբար իմ կեանքիս մէջ այդ նկարագրներուն: Ըսուի գուցէ թէ՛ կեանքի մէջ դեռ նոր մտած ըլլամ, սակայն երբեմն կարճ ժամանակուայ կեանքի մը ընթացքին մէջ դէպքերը և փոփոխութիւնները այնքան շուտով իրարու կը յաջորդեն, այնքան շատ մարդոց հետ գործ կ'ունենանք. այնքան յաճախ չիում՝ ամեն խաւերու հետ, յուսախաբութիւնները և պատրանքները այնքան ստեպ կը կրկնուին, որ մարդ երկա՛ր տարիներ ապրած կ'զգայ ինքզինքը, և տակաւին սև մազերով ալեգարգ ծերունիներէ աւելի փորձառու կըլլայ...

Անձնուէր և ինքնամոռաց նկարագրներու ես հանդիպել եմ միայն ժողովուրդի հասարակ կամ միջին դասակարգին մէջ: Յարգելով անշուշտ սակաւթիւ բացառութիւնները, ժողովրդեան հարուստ ու բարձր դասակարգը, առ հասարակ մեծ անձնատէրներ, անսիրտներ, ինկածներ տուած է մարդկութեան... Տխուր երևոյթ...

Թէ ինչո՞ւ համար ժողովրդեան համեստ դասակարգին մէջ ընդհանրապէս կ'երևան բարձր հոգիներ, այդ այս անգամուայ նիւթէն դուրս է. այդ ինչիւրը կարելի է ծածել ուրիշ անգամ...

Նախորդ յօդուածով մը Ազգ. կրթարան-Որբանոցի մասին համառօտիւ խօսել էի: Այդ ազնիւ և օգտակար հաստատութիւնը դեռ մինչև ցարդ եզրիպտոսէն նիւթական մեծ քաջալերութիւն մը չէ՛ գըտած... Պատճառները մեզ անձանօթ չեն բողբոջիր... Անձնական հակառակութիւնները և մանաւանդ չար նախանձը ինչպէս ամեն ինչիւր՝ նոյնպէս և ասոր մէջ խոչոր բաժին մը ունին...

Մինչև ե՛րբ անցեալի նախանձն ու ատելութիւնը, և ներկայի գձուճ շահերն ու հաշիւները պիտի տուժեն որբերն ու թշուառները...

Ե՛րբ արդեօք պիտի սովորինք մոռնալ մեր անձնական կիրքերն ու էնդրիկները, ընդհանուրի օգուտն ու շահը մտածելու համար. միայն վերջին ազգային սարսափելի աղէտները բաւական չեզո՞ւն ցնցելու մեր սիրտն ու հոգին... դեռ չա՛տ արիւն պէտք է քալէ ուրեմն որպէսզի Գութ ու Սէր դառնանք միայն...

Գանի մը անգամներ առիթ ունեցայ

այցելել Որբանոցը, և ինչպէս նախորդ թղթակցութեամբս կ'ըսէի, գեղեցիկ է Պարոն Բիւրքեանի ձեռնարկած գործը. և ինքը՝ իր գնորդին մարդն է:

Խզճամիտ ունեցիչ, գորովագութ հայր, իր աշակերտ-ղաւակներուն բարոյականին վերին աստիճանի նախանձանդիւր դաստիարակ. ահա՛ Պարոն Բիւրքեանը:

Տակաւին մնայուն օգնական չունենալով՝ օրուան մէջ հանդիստ չգտնելէ զատ գիշերուան քունի հանդիստն ալ կը զոհէ շատ անգամ հովելու համար տղայոց քունին, դիտելու համար մանաւանդ թէ ինչ կ'անցնի կը դառնայ հսկողութենէ ազատ այդ մի քանի ժամերուն մէջ...

Այս մանրամասնութեանց վրայ ծանրանալն իսկ աւելորդ է. որբերուն վարքն ու բարքը հիացում կ'ազդէ ամեն անոնց որոնք առիթ կ'ունենան զանոնք մօտէն տեսնելու և ճանչնալու, և այդ ինքնին գրաւական մըն է արդէն Պարոն Բիւրքեանի անձնուէր խնամքներուն ու տրուութեանց...

Տղայքը մանաւանդ բարոյապէս դաստիարակելը դիւրին չէ... այդ գործին մէջ մանրիկները միայն դիտեն թէ որքան գրծուարիքն ու փշալի է ճանապարհը — խզճամիտ դաստիարակներու համար ըսել կուզեմ անշուշտ —

Պարոն Բիւրքեան մեծ զոհողութիւններով և հազարումէկ արգելքներու դէմ ոգի ի բռին մաքառելով է որ ձեռնարկած ու մէջտեղ բերած է իր գործը. զայդ ամենքս ալ գիտենք ու կը տեսնենք: Եւ եթէ աւելի՛ լայն, աւելի՛ բարձր ուղղութեան մը վրայ չէ՛ տակաւին այդ հաստատութիւնը՝ յանցանք իրը չէ... Միայն պահանջկոտ ըլլալը բաւական չէ, քսակին բերաններն ալ բանալու է քիչ մը...

Բարեբաղդաբար Պարոն Վահան Բիւրքեան յուսահատողներէն չէ՛, նա՛ զօրաւոր և անդրդուելի կը մնայ իր նպատակին մէջ. և մենք՝ հաւատք ունինք թէ այդպէս ալ պիտի մնայ:

Անյողող կամք, համբերող սիրտ, կարողութիւն և կատարեալ յաճողութիւն կը մաղթենք մենք ալ ի սրտէ՛ Որբանոցի համակրելի հիմնադրին:

(Մնացեալը յաջորդով)

ԳԱՌԻ



ՊԱՐՄԻՑ ՎԵՃ. ՇԱՀԸ

ԹԱԻՐԻՉԻ ՀԱՅՈՒՆՆԵԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Արշալոյս ի 109 թուով առիթ ունեցանք մեր ընթերցողաց ներկայացնել թաւրիցի Հայուհեաց Բարեգ. Ընկերութիւնը, որ, անոր 1899-1900 տարեշրջանի տեղեկագրոյն վրայ խօսելով :

Միևնոյն առիթը էր որ ծանուցած էինք թէ՛ Վեհափառ Շահը իւր գէպ ի Եւրոպա ըրած ճամբորդութեան միջոցին թաւրից ալ այցելած էր, և տեղւոյն Գեր. Առաջնորդը՝ Վեհ. Մատուր-Խան Սէթ-Խանեանի հետ, նորին Վեհափառութեան և Բարձր. Սատրաղամին մատուցած էին Հայուհեաց Ընկերութեան արհեստանոցին մէջ պատրաստուած մէկ մէկ ընտիր ձեռագործ, Պարսկերէն ուղեքննարկ :

Ըսած էինք նաև թէ՛ նորին Վեհափառութիւնը մեծ համակրութեամբ բարեհաճած էր ընդունիլ Ընկերութեան նուէրն և ուղեքննարկ, գովելով նորա կատարած աշխատութիւնը, և Բարձր. Սատրաղամի միջոցաւ խոստացած էր Եւրոպայէ վերադարձին Ընկերութիւնը արժանացնել իւր արքայական Բարձր շնորհացն ու քաջալերութեանը :

Այժմ՝ Հայուհեաց Ընկերութեան Պատ. Վարչութեան քարտուղարը, յարգելի Տիար Գ. Ջիլինկիրեան, նամակ մը ուղղելով մեզ, կը ծանուցանէ թէ՛ նորին Վեհափառութիւն իւր վերադարձին այցելած է ի Թաւրից և դրամական կարևոր պարգև մը շնորհելէ զատ, խօստացած է թէ՛ հրահանգն զրկել ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՉՍՏ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԵԱՄԲ « ԾԵՐՄԱՆ » մը, որով թաւրիցի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութիւնը՝ յետ այսու պիտի ապրի և գործէ ընդ Հովանաւորութեամբ և Պաշտպանութեամբ Վեհափառ Շահին :

Սոյն նամակի պարունակութիւնը և անոր պատճառած ուրախութիւնը միմիայն պէտք չ'է որ սահմանափակուի թաւրիցի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան անդամներուն և անոր համակիրներուն մէջ. այլ՝ ամբողջ հայերուս համար կրնանք եր-

ջանկութիւն մը համարել զայս, որ Պարսկաստանի քաղաքներուն մէջ տարածուած բազմաթիւ մեր համարիւն եղբայրները, ազատամտ Վեհապետի մը հովանոյն տակ կ'ապրին, և անոր պաշտպանութիւնը լիով կը վայելեն ամեն պարագայի մէջ :

Առիթն է որ ի սրտէ շնորհաւորենք թաւրիցի Հայուհեաց Բարեգործ. Ընկերութեան ժրջան և ազնիւ անդամուհիներն, որոց անդու ջանքից շնորհիւ Ատրպատականի կարօտ մանուկներն այնչափ տարիներէ ի վեր նախախնամական հոգածութիւն ու խնամք կը վայելեն :

Ե .

ԹՐԱՆՍՎԱԼ

ԻՆՉՊԷՍ ՊՐԾԱԻ ՏԸ ՈՒԷԹ. — Անդ. ղիական թերթերը հետևեալը կը գրեն. Թապանչուի և Լէտիպրանտի անդ. ղիական գծերը խորտակելով անցնելէ ետքը, Տր Ուէթ Ֆիքսպուրկ քաջուեցաւ :

Իր դէպի Գար արշաւանքի և նահանջին միջոցին ունեցած լուր կորուստը 50 մեռեալ և 100 դերի է, նմանապէս 3 թնդանօթ և բաւական ռազմավորք :

Տր Ուէթ իր ետեւը զինքը հալածող 4 զօրաբաժին ունէր, չհնգերորդ մը պահեստի էր և վեցերորդ շարժուն զօրաբաժին մը, Թապանչուէն Լէտիպրանտ երկարող ամբողջած պահականոցներու քով Տր Ուէթի կ'սպասէր : Ուրեմն փախուստի ճամբայ չը կուր : Անգղիացի Նօքս զօրավարին ռազմագիտական շարժումները կը կայանային Տր Ուէթը այս ամբողջած գծին և Պատուծօլէնտի սահմանադրուիւնի մէջ նեղը ձգել :

Չօրավար Նօքս Հէլվէթիայի մօտ, Տր Ուէթի վերջապահները յանկարծակի բերելով ցրուեց, ապա դէպի արևմուտք մեծ շրջանիկ շարժումով մը ամսոյս 11 ին Պօէրները Թապանչուի ուղղութեամբ ետ մղեց :

Տր Ուէթ որ կէլիք պատնէշաւորուած էր Դեկտ. 12 ին, անգղիական գնդի մը Տէլվէթսորթի գրաւելը իմանալուն պէս ամբողջած տեղը պարպեց :

տարածուած շրջազգեստին բացուածքէն դուրս կ'ելլային :

Տր Բլօզօֆ կոմսը, թէպէտև շատ երիտասարդ՝ այդ միջոցին հարիւրապետ էր Ռուս պահակաց հիւսարներու գունդին մէջ. Ժէրմէն զայն սիրեց, իր սրտին բովանդակ զօրութեամբ եւ երիտասարդ ու խանդավառ հոգիովը :

Իրենց յարաբերութիւնները այն աստիճանի հասան, որ կոմսը լրջօրէն ամուսնութիւն խորհեցաւ ու Ժէրմէն Տալիզ 1836 ի ձմեռն թատրոնէն հրաժարեցաւ :

Հարիւրապետն շնորհագեղ արուեստագիտուհիին հետ շարունակ գորովալից ու փափկանկատ յարաբերութիւն մը մշակեց և տաղանդ ունեցաւ Ժէրմէնի նման թանկագին տղջկան մը անհրաժեշտ պէտքը գաւառու ու զինքը այն աստիճան սիրեցնելու՝ որ գեղանի արթիւթը, անոր ներկայութեանը երեք չէր նշմարէր անցնող արդատաս ժամերը :

Բայց այս ամբողջական սէրը մէկ կ'սկսեց ընդհատուեցաւ անակնկալ պատահականութեամբ մը, որուն երեքը չէին սպասեր :

Իրիկուն մը Սէրթ կոմսը, սովորականէն շատ ուշ եկաւ Ժէրմէնի, և աղջիկը անմիջապէս յայտնատեսութիւնը ունեցաւ թէ՛ անխորժ ու անպատեղի պատահար մը իրենց ծրարիներուն արգելք պիտի հանդիսանար :

Տր Բլօզօֆ կոմսը որ ազնուաբար յուսովեան համար ամեն իրիկուն կանուխկեկ մը մեկնէր,

Այս միջոցին, Նօքս հալածուած կը շարունակէր. բայց Տր Ուէթ անկէց քանի մը ժամ առաջում ունէր, և այդ առաւելութենէն մեծապէս օգուտ քաղեց, ինչպէս որ բոլոր իր անցած ճամբուն երկայնքը յոգնելէ ոտքերինն լուռուած ձիերը կ'ապացուցանէին :

Այս մոլեգին հետապնդումը, առանց դադարի կը շարունակուէր հակառակ անձրևին և սաստիկ տաքին :

Դեկտ. 12 ին Հաազպուք հրամանատարին Գոմմանտօն Տր Ուէթի միացաւ և միացեալ Պօէր գունդերը ուղղակի Սըրինկաննէքի կիրճը քալեցին, որ Թապանչուէն 15 մղոն արևելք կարևոր դիրք մըն է : Նօքս Տր Ուէթէն մէկ ժամ հեռու էր : Տր Ուէթ շատ երևոյթի, ալ ստիպեալ անել ծակը մտած էր. բայց իր խորագիտութիւնը ու ազգութիւնը այս յուսահատ և տազնանապալից կացութեան դժուարութիւններուն առաջը առաւ :

Կտրուկ որոշումով մը անմիջապէս Հաազպուքը արևմուտք փութացուց Թապանչուի հարաւակողմը գտնուող Վիգթորիա կիրճին վրայ կեղծ յարձակում մը ընելու համար՝ ինք ալ այս միջոցին պատերազմին գուցէ ամենէն յանդուգն և ամենէն նշանաւոր զինուորական գործողութիւնը կը կատարէր :

Սըրինկանի կիրճը 4 մղոն լայնութեամբ, կատարելապէս տափակ և հարթ տեղ մըն է, կիրճին անցքին երկու քովը ամրացուած անգլիական բնիքեր կան և անգլիական գունդ մը որ թնդանօթներով կիրճին արևելեան կատարին վրայ դիրք բռնած էր, ուշադրութեամբ Պօէրներու շարժումներուն կը հսկէր :

Յանկարծ հիանալի տեսարան մը պարզուեցաւ : Ամբողջ Պօէր բանակը 2500 հոգիէ բաղկացած, տարածուած կարգով, քառամակ կիրճին վրայ յարձակեցան : Նախագահ Սթէյն և Բիէթ Ֆուրիէ զօրավարը գրոհը կ'առաջնորդէին : Անգլիական թնդանօթները ու հրացանները կրակ տեղալ սկսան, բայց մէկէն ի մէկ Պօէրները ետ դարձան և կատաղաբար արևմտեան կողմը բլուրի մը տակը խոյսցան, ուր մինակ

այդ իրիկունը իր այցելութիւնը երկարեց եւ ընդունելութեան օրուան հիւրերուն մեկնելէն յետոյ, երբ Ժէրմէնի հետ միտ մ'իսակ մնաց, լայն քայլերով թեւաբաց դէպի անոր գնաց կարծես զայն սրտին խոր թագցնել ուզելով :

—Մեղի բաժնի կ'ուզեն, սիրելի՛ Ժէրմէնս ըսաւ հարիւրապետը— այսօր իսկ դարձի հրաման ստացայ, վաղը պէտք է որ մեկնիմ, դուք ալ հետս մի՛նչեւ : Չուիցերիայ պիտի գաք, ուր մեր պսակի ռարտողութիւնը կատարել պիտի տանք կաթիլի քահանայի մը. այնուհետեւ Աստուծոյ աւջեւ ամուսնիդ պիտի ըլլամ ու կեանքս այդ յիշատակով յաւիտեանս լուսածաճանչ պիտի ըլլայ : Բայց չ'պիտի կրնաս ետեւէս Ռուսիա գալ, ընտանիքս մեր ամուսնութիւնը չ'պիտի ընդունի. ֆրանսայի մէջ ալ չեմք կրնար կատարել, քանի որ ժամանակ չ'ունինք օրէնքին պահանջած ձեւակերպութիւնները կատարելու :

—Բայց բարեկամս, պատասխանեց երիտասարդ աղջիկը— ատիկա կեանքը ինձի համար փշրել ըսել է, սիրոյ ամեն յոյսէ հրաժարել է :

—Դուն ալ ինձի համար մեկնոյնը չ'պիտի ընէիր, ո՛հ Ժէրմէն, երբոր Աստուծոյ առջեւ իմ ըլլաւ, ալ բան մը մեր հոգիները չ'պիտի կրնայ բաժնել, քեզի սրտիս մէջը պիտի տանիմ, Ժէրմէնս գուն ալ զիս սրտից խորը պիտի թաքցունես, ու եթէ ձակատագիրը չ'ուզէ որ մենք կրկին իրար տեսնենք, մարդկային

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Վ Ա Ն

ՀԱՆՐԻ ԼԵՂԵՐՏԻՅԷ

ՕՐՈՒԱՆ ՄԸ ԱՄՈՒՄՆԱՅԵԱԼԸ

Ա .

Սէրթ աը Բլօզօֆ կոմսը 1835 ին քանի մը ամուսնու համար Բարիզ եկաւ :

Գեղարուեստը ու արուեստագետները կը պաշտէր եւ Շօթէնի պէս դաշնակ կը զարնէր, երբոր զինքը Ժէրմէն Տալիզի ներկայացուցին, որ այն ժամանակները հռչակաւոր Արթիսթ մ'էր, այս թիթեւ աշխարհիս մէջ անբասիր առաջինութեան մը համբաւը կը վայելէր, ալ երիտասարդ կոմսը շարժել էրք անգամ Օթէրայի դերասանաց հանրասրահը կը յաճախէր :

Ժէրմէն քսան տարեկանը նոր պիտի մըտնար, դաւկահար, թուի աղջիկ մըն էր, անհուն միօզորիզի կապոյտ աչքերով ու տարօրինապէս անուշ և խորապէս միտքիական նայուածքով. նայուածք՝ որուն մէջ երազը, ու սիրոյ հուրը կը պլպլաին : Բարակ ու թեթեւօրէն ծոած նասակ մը ունէր նա, ճկուն իրանով, քանդակածոյ ուսերով, շնորհալի և իլաձեւ ձեռքերով. ատքերը փոքրիկ ու ձեւաւոր, պաշտելի և գոգցես կաղապարեալ սրունքները շափրակի նման

անգլիական բերդ մը իրենց ճամբան կը գոցէր :

Այս հրաշալի յանդգնութեամբ շարժումը կատարելապէս յաջողեցաւ, Պօէրները մինակ 15 լիպրանոց թնդանօթ մը որ Տէլէթստորքի մէջ առած էին, ինքնաշարժ թնդանօթ մը և 25 դերի ձգեցին անգլիացոց ձեռքը : Տը Ուէթ ամենէն ետքը, վերջապահներուն հետ անցաւ կիրճէն :

Հ Ն Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտոն 28 Դեկտ. — Լորտ Ռօպերթս ծիպարարը հասած է :

Տը Ուէթ Սէնէկալ կը գտնուի, իր հարաւ արշաւելու փորձը հաւանականաբար անյաջող ելած է :

Իրէթօրիա 30 Դեկտ. — Պօէրները Հէլվէտիան առին, 59 անգլիացի սպաննուած և 200 հոգի դերի բռնուած են :

Զօրավար Ռիվըզ լիբրտին գրաւած է Հէլվէտիան : Գիշերը կը հալածէ Պօէրները :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՍՈՒՐԻԱՅ

Վերջերս Բայֆաի մէջ քաղաքական յանցանքով ձերբակալութիւններ եղած են : Բայֆաի փարոսին տեսուչը՝ առաջինը ձերբակալուած է, արտասահման ապաստանող Երիտասարդ-Թուրքերուն հետ յարաբերութեան մէջ ըլլալը հասկցուելով : Ձերբակալուածը Պէյրութ առաջնորդուած է, բայց գիշերանց կրցած է բանտէն փախչիլ : Պահապանները զինքը դարձեալ ձեռք ձրգելով հետեւեալ օրը շրջապակապ նաւ դըրած են Պոլիս տարուելու համար :

Առողջապահական վարչութիւնէն բժիշկ մ'ալ, այս ձերբակալումը լսելով անմիջապէս Եւրոպա գացող շոգեխաւ մը մտած է : Ոստիկանութիւնը վտանգաւոր թուղթեր գտած է մարտի պաշտօնեայի մը քովէն որ ձերբակալուած և Պէյրութ բանտարկուած է :

զօրութիւն մը չ'կայ որ կարողանայ յիշատակով իրարու ըլլալին արգելիլ, և Կ'երդնում քեզի այն պարագային, սիրելի ժէրմէնս, որ շըթթունքներս իսպառ ուրիշ կնոջ մը շըթթունքներուն չ'պիտի դաչին :

Երկու երիտասարդները իրենց երդումը առաջին համրոյրով մը կնքեցին ու որոշեցին որ յաջորդ օրը մէկտեղ Լիւսէրն մեկնին, ուր կաթոլիկ քահանայ մը որ հարիւրապետը կը ճանչնար, գիշերը պիտի պսակէր :

Հարսանեկան դիշերին լծին մօտակայքը գտնուող առանձին պանդոկ մը պիտի անցնէին և արշալոյսին իրարմէ պիտի զատուէին, Աստուծոյ առջեւ իրարու օրինաւոր ամուսին մնալով :

Բ.

Ամուսնութիւնը կատարուեցաւ Լիւսէրնի մէջ, Չուիցերեացի սպայի մը պատկանող փոքրիկ մատարան մը մէջ : միակ վկաններն էին ըսպան եւ իր մէկ ուրիշ ընկերը :

Պատարագէն յետոյ համեստ միջնաճաշ մը ըրին դարատափի մը վրայ, ուրկէց Լիւսէրնի լծին ու քովի լեռներուն հիանալի տեսարանը աչքերնուն առաջ կը պարզուէր :

Հոկտեմբերի մէջերն էր, ծառերը մոխրագոյն երեւոյթ մը առած էին, ու երկար գորշագոյն ամպեր, լեռներու եզերքները կը ծփացը-

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՐԱՍՆԵԿԱՆ ՔՐՈՅԻԿ

Կիրակի օրը հարսանքներու երջանկաբեր օրն էր. մէկ կողմէ Հայ Թատերասիրաց խումբը Շարա Ապտ-իւլ-Ազիզի թատրոնը կը հրաւիրէր թատերասէր հասարակութիւնը, Վահան Մամիկոնիի քաղաքործութիւնները զիտելու. միւս կողմէ արդէն հարսանեկան տոմսերը մեծ փութաջանութեամբ կը ցրուէին թղթատարութեան ու մասնաւոր անատներու միջոցաւ և փեսացուներու ու հարսնացուներու բարեկամները ու ազգականները կը հրաւիրուէին հարսնետուն, գոհ սրտերու միացումին ակնատես վկայ լինելու համար : Մեր փեսաները այս պարագային Թատերասիրաց խմբին համար, կ'արժէ ըսել, Վեսապեր եղան իրենց անհամբերութեամբ. բայց չէ՛. երկուստեք ալ չէին կրնար իրենց որոշումներն յետաձգել. եղածը եղած էր : Ժամը 8 ին Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ ամենամեծ չքով եւ ի ներկայութեան խումբը բազմութեան մը, տեղի ունեցաւ պսակադրութեան արարողութիւնն Տիար Ապտ Պետրոսեանի ընդ Օրիորդ Մարի Եսպուպեանի :

Եկեղեցական արարողութեան կը նախագահէր Չէյթուլուցի Բարթողոմէոս վարդապետը, որ յետ աւարտման եկեղեցական արարողութեանց եռանդալից քարոզ մը խօսեցաւ, և թուեց այն առաւելութիւններն, որ Տիար Ապտ Պետրոսեան ունէր յանձին :

Միւսնոյն ժամուն Գեր. Յովսէփ Եպիսկոպոս Այվազեան, իր հետն ունենալով քահանայ մը և շարք մը զպիւրներ, ի Ծախկալա Հաննա Ասիսի բնակարանին մէջ կը կատարէր Պսակադրութեան հանդէսն, Տիար Աստուր Էտիրնէլեանի ընդ Օրիորդ Մարի Մատուրեանի :

Այս հարսանեաց հանդէսին մէջ ալ տեսնուած զէմքերը ցոյց կուտային թէ՛ այդ երկու ընտանիքներն իրենց շուրջը սենին համակիրներու մեծ թիւ մը :

Անթիւ պսակներ ու նուէրներ, ճոխ պիւֆե մը և զուարթացած գլուխներ. իսկապէս հարսանք մը, միայն Գրիտոս մը կը պտկուէր շուրջ գիւնի վերածելու համար :

Քաղաքին ուրիշ մէկ կէտին վրայ Տիար Մարտիրոս Սէրաբեանի բնակարանին մէջ ալ հարսանքներու հաւաքում մը կար :

Արթ. Տէր Եղիշի Գահանայ Պալուսի, ի ներկայութեան ընտրեալ բազմութեան մը, կը կատարէր Պսակադրութեան հանդէսն, Տիար Մամա Թէրզեանի ընդ Օրիորդ Արաքսի Միրիճանեանի :

նէին իրենց սգաւորի ժանեակներով սեւ շղարշը : Ժամը 3 ին ատենները ամուսնացեալները նաւակ մը նստեցան, որ Սէրթ վարձած էր գիւրնք կղզիացած պանդոկ մը տանելու համար, ուր իրենց սիրոյ ճակատագիրը պիտի կատարուէր :

Մինչեւ հետեւեալ առաւօտը մէկ գիշերիկ մը միայն ունէին, գիշեր անձկալից կարճութեան՝ ցնորալից ուրախութեան, գիշեր մը որ իրենց ապագան, անցեալը և կեանքը պիտի ըլլար :

Վերջին ծիծեռնակները լիճին եզերքէն կը սուրային, նաւակները զէպի բացը կը սահէին լճին վրայ, սիւքին քմահաճ մղումին տակ ծռուելով իրենց բարակ առագաստները :

Վերջալոյսին, մօտեցան լճային պանդոկին սանդուղիներուն. նկարագեղ պանդոկ մ'էր սա փայտէ լուսանցիկ պաշտամաններով, որք լճակին խոր շուրերուն վրայ կը նայէին : Լուսինը ճերմակ լեռներու անկողինէն կ'ելլար, ճակատը թեթեւ, երկնազարդ ամպերով շրջանակուած :

Իրենց սենեակը լճին վրայ կը նայէր, երկու պատուհանով : Լուսին լուսով արծաթագօծուած լիճին անհուն մակերեւոյթը. իր ցոլքը կ'ստուերագրէր, մանիչակագոյն մթնոլորտին մէջ, որ կը թաթաւուէր այդ պայծառ լոյսով : Արծաթափայլ լոյս մը, ամուսնացեալի քօղին պէս ճերմակ, շղարշ վարագոյրներէն ներս կը

Տիար Մամա Թէրզեան Գահիրէի համար ամենէն ծանօթ զէմքն է շնորհիւ իւր բարեգործական նուիրատուութեանց :

Գահիրէի Հայոց Որբասիրաց Ընկերութիւնը երկու պսակներ պատրաստած էր, նուիրելու համար մին Պետրոսեան և միւսը Թէրզեան ամուսնուին : Մինք ալ մեր սրտագին շնորհաւորութիւնները կը նուիրենք այս երեք զոյգերուն միանգամայն : Ա.

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Առաջիկայ Ուրբաթ, 4 Յունվար 1901 երկուցիան ժամը 9 ին, Տէտէ Պէյլեանի առաջնորդութեամբ Շարա Ապտիւլ Ազիզի եզրպտական թատրոնին մէջ պիտի ներկայացուի հոչակաւոր Քէմալ Պէյի մէկ հեղինակութիւնն, ՎԱ. ԹԱՆ կամ Սիլիսթրիէ :

Ծանօթ հեղինակին անունը և խումբին լաւ կազմակերպութիւնը գրաւականներ են թէ Գահիրէի արգոյ հասարակութիւնը շատ լաւ տպաւորութեան տակ պիտի մնայ, երբ պատուէ սոյն ներկայացումն :

ՆԱՄԱԿ ԲԱՐԻՁԷՆ

Փարիզ 24 Դեկտ. 1900

Երէկ՝ կիրակէ Փարիզի Հայոց աղքատիկ մատարան մէջ հոգեհանգիստ կատարուեցաւ հանգուցեալ և ողբացեալ Սորէն Ստեփանի : Սրբազանին համար : Հոգեհանգիստը կատարուեցաւ երկու հայ ուսանողներու՝ ՊՊ. Եղիզարեանի և Նահապետեանի նախաձեռնութեամբ, որոնք նամակ մը գրելով մատուցի հոգաբարձութեան, խնդրած էին որ հոգեհանգիստ կատարել տան և բարեբաղդաբար ըստ իրենց բողոքանաց տեղի ունեցաւ արարողութիւնը :

Չարմանալի չէ՛ որ երկու ուսանողներ ստիպուած կը լինին Բարիզի հոգեւոր իշխանութեան կամ անոր ներկայացուցիչներուն դիմելով անոր յիշեցնել տալ իւր պարտականութիւնը զէպի մի հոգեւորական՝ որ մեր եկեղեցոյն ամենափայլուն փառքերէն մին էր : Ա՛լ չենք յիշեր Սրբազանի հայ աղքատիկ մատնագրութեան մատուցած ծառայութիւնները : Պէտք չէ՛ որ հոգաբարձութիւնը կամ Փարիզի հոգեւոր իշխանութիւնը ինքնաբերաբար կատարէր այն սրբազան արարողութիւնը. հարկաւոր էր որ ուսանողները յիշեցնեն այդ պարտքը : —Ամօթ չէ՛ նոյնպէս որ հոգաբարձութիւնը, մոմի և արարողութեան համար փողի խնդրներ հանէ և կամ նկատողութիւններ ընէ... ուսանողներու... : Այդ աշխարհները աւելի քան վերաւորիչ չեն, մասնաւոր երբ արարողութիւնը եկեղեցականի մը, բարձրաստիճան եկեղեցականի մը համար է : Մ. Ա. ԳԱԻԻԹ ԲԵԿ

Թախանցէր, անխռով լուծիւն մը կը արբէր չորս կողմը :

Ամուսնական անկողինը գեղջկական անկողին մըն էր, որուն կոշտ սաւանէն վայրի թիւմի հոտ մը կուգար : Երկու ամուսնացեալները հոն սմեն բան մոռցան. միմիայն իրար սիրելու համար... :

Արշալոյսը բացուելու մօտ էր արդէն, երբ ժէրմէն սկսաւ մրափել իր պաշտելի Սէրթին սրտին վրայ, արտեւանունքները գոց, բերանը անուշ երազի ժպիտով մը կ'իսաբաց :

Հարիւրապետը կ'ամաց մը իր շնորհալից կնոջ գլուխը բարձին վրայ հանգստացուց ու անշուկ ելաւ հագուեցաւ :

Պանդոկին բակին մէջէն լսեց թրթրակին (փոքրիկ երկձի կառք) լծուած ձիուն զանգակիկին ձայնը, որ զինքը իր սիրեցեալէն հեռու պիտի տանէր :

Ժէրմէն կ'երազէր դեռ երջանիկ ու երբեմն բերնէն տարտամ բառեր կը խուսափէին... — Սէրթ... պաշտելի Սէրթ... սիրէ գիս միշտ... սիրող ինձի ձգէ... պիտի ձգես... առ իմ... բարեկամ... սրտիդ ամենատաք խորշին մէջը տեղաւորէ, որ քու ձիւնի երկրիդ մէջը չի պաղի... :

(Շարունակելի) Թարգմ. ԼԵՒՈՆ

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Table with 6 columns of numbers: 2951, 9755, 1801, 1141, 304, 9043; 8963, 9938, 9466, 6127, 2580, 7566; 2010, 3498, 2432, 9258, 5771, 5725; 8534, 6791, 8482, 551, 2150, 8895; 7479, 3657, 1987

ՀՐԷԻՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

Table with 6 columns of numbers: 4149, 3864, 7261, 3001, 63, 251; 392, 524, 791, 1370, 1807, 1992; 2458, 2665, 2666, 2707, 2877, 3329; 3816, 4066, 4367, 4733, 4847, 5155; 6094, 6966, 7413, 8079, 8447, 8964

ՄԱՆԿԱԲԱՐՁ

ՏՆԻԿԻՆ ՍՈՍԻԿ ԱԶԳԱՊԵՏԵԱՆ

Վերջերս իւր բնականութեանը կուրուստիչէն փոխադրած է Շարա Ապտիւլ Ազիզ, Ալի փաշա Շէրիֆի պարտիզին գիմաց, Անմէտ պէյ Ապտիւլ Բազիլի 20 թիւ սեփականութեան մէջ:

ԻԳՆԱՏԻՈՍ Կ. ՍԱՐԱՑԵԱՆ

Կերպարանք թէ՛ քանի տարիներէ ի վեր հանրածանօթ Անգլիացի վաճառական-գերծակ ժՕՆ ԳՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելագոյն հմուտ եւ փորձառու, այս անգամ հաստատուած է հանգուցեալ Նուպար փաշայի Տայրտին գիմացը, նորաչէն խանութիւնը ունի մէջ:

ՄԻՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՅՈՅՈՒ

Գանի որ ՍԷԼՎԱՃԵԱՆ վաճառատուն մէջ (ի Մուսրի) պիտի գտնէք միմիայն 22 '15 ի նիքէլ, կոթէն լարուող սիրուն ժամացույցներ որոց լաւ բանիլը երաշխաւ տրեալ է: Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացույցներ 120 ՂԲ է սկսեալ մինչև 2500 ՂԲ: Ինչպէս նաև արծաթ ոսկեպատ, նիքէլ, և ուր սիտէ ժամացույցներ. պատի և քօնուլի բողմազան Բանտիլ շերտ և ամեն ճաշակի յարմար Գոհարեղէնք:

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ


Ս Ի Ն Կ Է Ր

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԻՐ

Պալատի փողոց. Խաղնէտարի ձեփականութիւն, Պրիսթօլ Օլթէլի ճիշդ գիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից:

Հին եւ նոր ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲՈՂՈՐ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ 6500 ՄԱՍԵԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐ ներն են եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է:

400 և աւելի վիսայականերով եւ մեքայնեով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ, ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁՍՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է: ՀԱՅԹԱՑԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻԻՆ ՀԱՅԹԱՑԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՑԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ



Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ Ի յասկանելին: ԳԻՆ ՉԱՓԱՒՈՐ

Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ: Վճարմանց Դիւրութիւն Փոխանակութիւն հին մեքենայից եւ նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՐՇԱԼՈՅՍԻՑԻ

ՇԱՐԻԱ ԱՊՏԻԼ ԱԶԻՋԻ ՍԿԻՔԸ

Օտանկի դերասանին դիտացի փողոցին մէջ Ժողովրդական տպարանին մէջ կը պատրաստուին: Այցեխարտեր, Երգարտարականութիւն Գիրքեր, Հրատարակութիւն, Մանկագրութիւն, Տեղեկագիրքեր, Կանտոնագիրքեր, Տոմար և այլ և այլ տպարանի վերաբերեալ յանձնարարութիւնները կը վաճառուին հետեւեալ գրքերին: 1. ԲՆԱՇԻԱՐՀԻ ԲԱՌԱՐԱՆ Ի Ա. և Բ. պրակներն, որոնք նոր հասած են և որոց մասին արդէն խօսուած է «Արշալոյսի» մէջ: 2. ՈՐԲՈՒՆԻ, որ նոյնպէս նոր հասած է և որոյ ի թուրքիա մուտքը, ինչպէս կը լսենք, արդիւնեւած է եղեր: 3. ՀԱՌԱՔԱՄՈՑ Հայոց ժողովրդական երգերու, Փարիզ տպագրեալ, Տնօրինութեամբ 8. Լեռն եղիազարեանցի: 4. ՉՈՒՄՆԱԿԱՆ Անիքի թոմարներ և ժողովրդական վէպիկներ կամ Մարգկային Կենաց Վարագոյրը և ուրիշ նոր հրատարակութիւններ:

Ա Ջ Դ

Եզրկատարնակ ազգայնոց կը փութանք ծանուցանել թէ՛ Տիար Կարապետ Նաւասարդեան քաղաքէն մեկնած ըլլալով՝ պիտի եզրկատարի համար Արեւելեան Մամուլ ներկայացուցին և Գործակալն եղած է Տիար Օհան Խնտամեան, որուն պէտք է դիմել սոյն թերթին բաժանորդագրութեան ևն. ի մասին: Յիշեալն պատրաստ է փափաքողաց համար բերել տալ ամեն տեսակ դպրոցական, գիտական, պատմական և այլ վիպական գրքեր ամենայն փութով և չափաւոր գնով: Քաղաքէն հեռու բնակող անձեր պէտք է իրենց յանձնարարութեան հետ յղեն փոստովի գումար մը ևս կանխավճար՝ իւր հասցէին յՍ.Պ.Վ. վարժարանի Տարագէլ-Վիտէնա:

Ա. ՊԱՆԵԱՆ Մ Ա թ Ի Լ Տ (Գաղթականաց կեանքէն) Գին 50 ՄԱՆԹԻՄ ԴԻՄԵԼ ԹԵՐԹԻՄ ԽՄԲԱԴՐԱՏՈՒՆԸ

ՏՅԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՑՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴԱՄԱՎՈՒՆ 1 ՄԻԼԵՐ 437 ՄԻԼՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամենէն աւելի շահաբաժինները: Ապահովագրեալներուն արդէն վճարած է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵՐ 480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ և է ընկերութեան մէջ միլիար աւելի է: Ս. ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ Ի Գահրէ

Աշխարհի մէջ գոյնուող ուրիշոր և է ինչ կերութեանէ աւելի երաշխաւորութիւններ, ընդարձակ գործառնութիւններ և հրատարակի վրայ աւելի ապահովագրութիւններ ունի և աւելի ապահովագրի կը գանձէ: ԱԼԷԲՈՒՍ ԱՎԻՉՈՎ գլխաւոր գործաւ կատար յԱղեքանդրիա: